

պետ (22), որուն պաշտօնէութեան յաջորդ տարին տեղի կ'ունենայ Արարատեան Նահանգի երկրաչարժը (23) :

Զուգայեցիի այս ճամբորդութեան մասին, 23 Նոյեմբեր 1679 թուակիր նամակ մ'ունինք, իր իսկ ստորագրութեամբ: Անոր լատիներէն թարգմանութիւնը հաւատարմօրէն ընդօրինակեցինք Վատիկանի Դիւանէն: Նամակն ուղղուած է Առաքել Վրդ. Բոպիկի, Շորոթի (24) Արքեպիսկոպոսին, զոր Կաթողիկոսը երկրորդ անգամ ըլլալով Հռոմ դրկած էր իբրեւ իր ներկայացուցիչը:

Յակոբ Կաթողիկոս կ'ըսէ՝ թէ Առաքել Վարդապետին իրմէ բաժնուելէն յետոյ, ինք Վրաստան կ'երթայ. ի հեճուկս Երեւանի Նահանգապետին, որ իրեն կը հրամայէ Երեւան վերադառնալ, ան կը շարունակէ ճամբան մինչեւ Բակաչուխ եւ կը հասնի Դադիան, որպէսզի Սեւ Մովսէս ճամբով անցնի Խրիմ: Սակայն քաղաքական ապստամբութեան մը հետեւանքով անցքի ազատ ճամբայ չ'ունենաք, եւ կը ստիպուի վերադառնալ եւ ուղղուիլ դէպի Ախլցխա: Սպերի մէջ կը ձերբակալուի Կարնոյ Բաշային կողմէ եւ կը բանտարկուի Կարնոյ ամրոցին մէջ: Ութ ամսուան բանտարկութենէ ետք, կաշառքով կ'ազատուի, եւ կը մեկնի դէպի Տիբրանա-

---

(22) Զամբո. էջ 119:

(23) Լեո, Անդ 348: Ezov, p. 12:

(24) Շորոթ կը գտնուի Գողթն գաւառին մէջ, Հիւսիսային կողմը: